արդէն այնքան էին երես առել, որ մտածում էին Ազգ. Խորհուրդն ու Հ. Յ. Դաշնակցութիւնն էլ մէջտեղից վերացնելու մասին: Ի պատասխան Ազգ. Խորհրդի դիմումի, Զինւ.-Յեղափ. Կոմիտէն, ապր. 8-ին, յայտարարեց բոլոր ազգային զօրամասերը և հայկական Ազգ. Խորհուրդը լուծուած: Վերջինս մերժեց ենթարկուել այդ կարգադրութեան, բայց, ի վերջոյ, ստիպուած եղաւ տեղի տալ, և ապր. 14-ին Զինւ.-Յեղ. Կոմիտէի ու Ազգ. Խորհրդի միջև ստորագրուեց մի համաձայնութիւն, որով՝

«1. Հայկական 2րդ ազգ. հետևակ գունդը կազմալուծուում է. նրա մի մասը մտնում է Համազասպի գումարտակների մէջ, իսկ մնացածը Խորհրդի կարմիր գումարտակների մէջ.

2. Համազասպի գումարտակները վերակազմուում են՝ ամբողջովին ենթարկուելով Խորհրդի իշխանութեան և մտնում են կարմիր բանակի մէջ «16րդ և 17րդ գումարտակներ» անուան տակ.

3. 16րդ և 17րդ գումարտակների հրամանատար է նշանակուում Համազասպը, իսկ օգնական՝ Սերգօ Մանուչարեանը...

4. Համազասպի գումարտակները նպատակ ունեն մօտիկ ապագայում գործողութիւններ սկսելու արևմտեան ուղղութեամբ, այսինքն՝ դէպի Գանձակ—Երևան»:

Համաձայնագիրը ստորագրեցին Ս. Շահումեանը, Մ. Կորկանեանը, Ա. Գիւլխանդանեանը, Ն. Տէր-Ղազարեանը և Յ. Տէր-Օհանեանը:

Այսպիսով, հայկական զօրամասերը ապր. 14-ից անցան բոլշևիկների ձեռքը: Նրանց թիւը հասնում էր 10-12 հազարի, 50-ի չափ թնդանօթներով: Նրանց մէջ էին հաշուում և Հ.Յ.Դաշնակցութեան ու սոց.-յեղափոխական մարտական խմբերը, որոնք վաստօրէն դանուում էին այդ կուսակցութիւնների ղեկավար մարմինների ձեռքին և հրապարակ էին բերում միայն արտակարգ դէպքերում: Դաշնակցական զօրամասը բաղկացած էր 6—700 ընտիր մարտիկներից՝ Գ. Բալայեանի հրամանատարութեան տակ:

Ապր. 25-ին իշխանութիւնը վերջնականապէս անցաւ բոլշևիկներին: Այդ օրը բանւորական, զինւորական և նաւաստիական խորհուրդների համագումարը կազմեց Բագուի Ժողովրդական Գործավարների Խորհուրդ՝ Ստ.Շահումեանի նախագահութեամբ: Միւս կուսակցութիւններն ու ազգային խորհուրդները յետ մղուեցին, թէև, անուղղակի կերպով, Հ. Ազգային Խորհուրդը շարունակում էր ազդեցութիւն ունենալ գործերի և հայկական զօրամասերի վրա: Առհասարակ, զօրքի կազմն ու ղեկավարութիւնը հիմնական փոփոխութեան չենթարկուեց. զինւորական գործավար և ընդհանուր հրամանատար էր բոլշևիկ Ղորղանեանը, նրա սպայակոյտի պետ՝ գնդ. Աւետիսեանը, հայկական զօրամասերի պետ՝ Համազասպը, ճակատի հրամանատար՝ գնդ. Ղազարեանը, բանակի մատակարարման մասի վարիչ՝ Մ. Տէր-Պողոսեանը և այլն:

Հայկական զօրամասերի վրա ձեռք դնելուց յետոյ, բոլշևիկները ձեռնարկեցին զինւորական ուժերի վերակազմութեան ու լրացման: Բայց այդ միջոցին հանգիստ նստած չէր և թշնամին: Նուրի փաշան Գանձակում կազմակերպում էր հռչակաւոր «իսլամական բանակը»՝ թիւրք սպաների